ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2018թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի հ.87-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը համարվող Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6/2 շենքի հ.17՝ 113.5քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.13022018-01-0169 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Կարեն Հայրապետյանին, Հասմիկ Հայրապետյանին, Վարազդատ Հայրապետյանին և Դավիթ Հայրապետյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6/2 շենքի հ.17՝ 113.5քմ մակերեսով բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Կարեն, Հասմիկ, Վարազդատ և Դավիթ Հայրապետյաններին:

Քննարկվող բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.13022018-01-0169 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը: Քննարկվող բնակարանի նկատմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքը գրանցվել է 13.02.2018թ., ինչի պարագայում այն ընդգրկված չէ Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի փետրվարի 13-ի «Երևան համայնքի սեփականության 2017 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» հ.123-Ա որոշման հավելվածի բնակելի նշանակության գույքերի ցանկում:

Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6/2 շենքը 1998-2001թթ. բնակեցվել է քաղաքացիների կողմից: Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի վճռով գույքը համարվել է տիրազուրկ և ճանաչվել է Երևանի Դավթաշեն համայնքի սեփականությունը, որի նկատմամբ 2007թ. կատարվել է իրավունքի պետական գրանցում նախկին Դավթաշեն համայնքի անվամբ: Նշված շենքում հաշվառված թվով 21 ոչ բնակելի տարածքները ընդգրկվել են բնակելի ֆոնդում, որոնցից 19 գույքային միավորների մասով կայացվել են համապատասխան որոշումներ և դրանք զբաղեցնող ընտանիքները սահմանված կարգով գրանցել են իրենց սեփականության իրավունքը:

Դավթաշեն վարչական շրջանի կողմից 14.05.2018թ. տրամադրված հ.81 տեղեկանքի համաձայն՝ Կարեն Հայրապետյանի ընտանիքը 2001 թվականից փաստացի, առանց իրավահաստատող փաստաթղթերի, բնակվում է Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6/2 շենքի հ.17 բնակարանում: Համաձայն ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Դավթաշենի անձնագրային խմբի 26.02.2018թ հ.22/11-192 գրության՝ վերջինիս ընտանիքը քննարկվող հասցեում հաշվառվել է 2013 թվականից:

Տվյալ ընտանիքը 2001 թվականից փաստացի բնակվում է քննարկվող բնակարանում, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով այն չեն կարողացել մասնավորեցնել:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված հ.հ.ԱՏ-26/02/2018-2-0056, ԱՏ-21/02/2018-2-0018 տեղեկանքների տվյալների համաձայն՝ Կարեն Հայրապետյանի, Հասմիկ Հայրապետյանի, Վարազդատ Հայրապետյանի և Դավիթ Հայրապետյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և վերջին հինգ տարվա ընթացքում անշարժ գույքի ձեռքբերում և օտարում չի գրանցվել:

Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի հ.87-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի հ.87-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի՝ անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ